ՈՂՋՈՅՆ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ

Հայ ազգը հրճւանքի մէջ է։ Նա, որին Ազգը միահամուռ խորհրդով միաձայն կոչել էր ս. Լուսաւորչի Գահը բարձրանալու համար, Նա ինքն է, որին Ռուսաց Օգոստափառ կայսրը հաստատեց իբր Կաթողիկոս Ամենայն Հայոց։ Եւ Ազգի Հայրապետը այսօր մեր մէջն է, Նա որ, Հայրապետ լինելուց առաջ, արդէն վաղուց Հայ Ազգի Հայրն էր։ Անսահման է հայութեան ուրախութիւնը, տեսնելով մի այդքան արժանաւոր անձն իբր պետ Հայաստանեայց Եկեղեցու, այն Եկեղեցու, որը այնքան և այնքան սերտ կապերով իրան կապուած է ուղում՝ տեսնել Հայ Ազգի վիճակի հետ։ Եկեղեցու սերտ կապը ազգութեան հետ—նորան ազգային է դարձրել, ժողովրդական հիմքերի վրայ կառուցուած լինելը—նորան դարձրել է ժողովրդական։ Եւ ցնծում է այսօր այն ամենը, ինչ ազգայնութիւն է ներկայացնում, և մեծ մխիթարութիւնն այն է, որ դորա հետ միասին ժողովուրդն է ցնծում, ցնծում է բաց և անկեղծ սրտով։ Ժողովուրդը այսօր ողջունում է իւր այն հոգևոր պետին, որի անձի մէջ մարմնացած են գերագոյն առաքինութիւնները, որոնց ընդունակ է հայի խելքն ու սիրտը։ Խրիմեանը 19-րդ դարի մի հանճար է, և, իբր այդպիսին, նա մէկն է իւր ժամանակի մարդկութեան լաւագոյն ներկայացուցիչներից։ Պարծանք հայութեան—Նա պարծանք է և համայն մարդկութեան։

Խրիմեանը գաղափարի մարդ է։ Եւ ինչպէս բոլոր գաղափարական մարդիկ, նա կրող է մտքերի, որոնք ժամանակով են հասունանում և ընդհանրութիւնից ճանաչւում։ Այսօրւայ Հայոց Կաթողիկոսը իբր անձն և ուղղութիւն նկատուած է ոչ երեկւանից, այլ աւելի քան երեսուն տարի առաջ։ Այդ ուղղութիւնը շկոլա է ստեղծել և աշակերտներ է հասունացրել. այդ ուղղութիւնը շփւել

է այլ շկոլաների հետ, մրցութեան մէջ մտնելով. և իւր ոյժով նա իւր համար ճանապարհ է հարթել ու թափանցել ազգի բոլոր խաւերի մէջ։ Իսկ հերոսը—այժմ եօթանասունը անց ծերունի—ողջ առողջ կանգնած է մեր մէջ նոյնքան կենդանի ոգով ու մտքով, որքան առաջ։

Խրիմեանները գալիս են ոգի տալու, ոգի ներշնչելու համար։ Նոցա միակ գործը չէ այս ու այն բանը կարգադրել. այդ նոցա գործն է իբր պաշտօնեաների. բայց պաշտօնեայից դուրս Խրիմեանների մէջ յատուկ անձնաւորութիւններ կան, որոնք իրանց ժամանակը կապում են նաև հեռաւոր ապագայի հետ։ Այդ է որ ներկայ Խրիմեանին դարձնում է մեծ մարդ, պատմական անձնաւորութիւն։

Մտքեր և զգացմունքներ կան, որոնք թւում են ընդհանրութեանը որպէս միայն երևակայութեան մէջ գոյութիւն ունեցող, որպէս ուտոպիաներ։ Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ Խրիմեանը այն անձնաւորութիւններից է, որոնք դալիս են ժողովրդի առաջ կանգնում՝ հաւատ ներշնչելու համար դէպի ուտոպիական երևացող գաղափարների գոյութիւնը և իրականանալու հնարաւորութիւնը։ Այդպիսի մարդկանցով է ընդհանրութեան ոգեկան մակերևոյթը բարձրանում։ Խրիմեանների գոյութիւնով մարդկութիւնը աղնւանում է և դրդւած է զգում դէպի վսեմը, դէպի գաղափարականը, դէպի ընդհանուր մարդկայինը, դէպի մաքրութիւնը, դէպի պարզութիւնը։ Նա թանկ է մեզ համար որպէս ուսուցիչ, դաստիարակ, քարոզիչ։ Երբէք այդպիսիները չեն անցնում առանց մեծ հետք թողնելու իրանց ետևից։ Եւ այսօր, հազարաւոր ամբոխը ոչ միայն ողջունում է նորան, այլ և առանց այդ զգալու՝ նորա հետ շփւելով՝ կրթւում է, դաստիարակւում է և իդէալներ է ստանում։

Եւ մենք, ու մեզ հետ մեր խմբագրութեան բոլոր գործակիցները, միախառնւելով ժողովրդի այդ անկեղծ ձայների հետ գոչում ենք՝

Կեցցէ Խրիմեան, կեցցէ Հայրիկ, կեցցէ Կաթողիկոս!

ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ։